


| | |
|-----------------------------------|---|
| Փաստ. անվանումը | ԵՄՀ հետազոտական գործունեության խթանման դրամաշնորհների տրամադրման կարգ |
| Փաստ. N | ԵՄՀ/ԸԿ-ԾՄ-04-01 |
| Հաստատման ամսաթիվը | 12/12/2014 |
| Արձանագրության N | |
| Հաստատող մարմինը | Գիտական խորհուրդ |
| Մշակող | Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոն |
| Ներդրման/իրականացման պատասխանատու | Միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի պատասխանատու |



1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 Սույն Կարգը սահմանում է ԵՄՀ-ի հետազոտական գործունեության ձևերից մեկի՝ հետազոտական ծրագրերի աջակցմանն ուղղված դրամաշնորհների տրամադրման կարգն ու պայմանները:
- 1.2 Ներքուհական դրամաշնորհների նպատակներն են՝
- ✓ ժամանակակից գիտության առավել կարևոր, արդիական ուղղություններով ակադեմիական աշխատակազմի գիտահետազոտական գործունեության ակտիվացումը,
 - ✓ արդյունավետ աջակցություն գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը և պրոֆեսորադասախոսական կազմի գիտական որակավորման բարձրացմանը,
 - ✓ առավել ընդունակ ուսանողների և սսպիրանտների՝ ներգրավումը գիտահետազոտական և/կամ հետազոտական աշխատանքներում,
 - ✓ գիտահետազոտական աշխատանքների արդյունքների լիարժեք և արդյունավետ կիրառումը կրթական գործընթացում, համալսարանի գիտական ներուժի մեծացման, հանրապետությունում առկա հիմնախնդիրների հետազոտմանն ու լուծմանն ուղղված առաջարկությունների մշակման գործում
 - ✓ խթանել հետազոտություն-աշխատաշուկա կապը
 - ✓ խթանել հետազոտություն-քաղաքացիական հասարակություն կապը

2. Դրամաշնորհների մրցույթի կազմակերպումը

- 2.1 Դրամաշնորհների մրցույթը հայտարարվում է ԵՄՀ-ի ռեկտորի հրամանով յուրաքանչյուր տարի:
- 2.2 Դրամաշնորհի ֆինանսավորումը տրամադրվում է ռեկտորի հրամանով յուրաքանչյուր տարի:
- 2.3 Մրցույթին կարող են ներկայացվել հիմնարար և կիրառական գիտահետազոտական, ինչպես նաև հետազոտական նախագծերի հայտեր:
- 2.4 Հայտերի գնահատման չափանիշներն են՝
- ✓ հետազոտության թեմայի արդիականությունը,
 - ✓ հետազոտության արդյունքների սպասվելիք գիտական և/կամ հետազոտական նշանակությունը,
 - ✓ հետազոտության արդյունքների իրացման նշանակությունը,
 - ✓ հետազոտության մեթոդաբանության և մեթոդների հիմնավորվածությունը և արդիականությունը

* Սսպիրանտների ներկայացրած նախագծի թեման չպետք է նույնանա նրա ատենախոսության թեմայի հետ:

- ✓ հետազոտական գործիքակազմի թեմատիկան և ընդհանուր բնութագիրը
 - ✓ անհատ հետազոտողների և հետազոտական թիմերի անդամների փորձառությունն ու կարողությունները
 - ✓ ֆինանսական ծախսերի հիմնավորվածությունը,
 - ✓ հայտի պատրաստման որակը. Շարադրման գրագիտությունը և հաջորդականությունը, հիմնավորվածությունը, ներկայացվող պահանջներին հայտի բովանդակային համապատասխանությունը,
 - ✓ հայտի և կից փաստաթղթերի անբողջականությունը, հայտի ներկայացման ժամկետը:
- 2.5 Դրամաշնորհային մրցույթի հայտարարումից հետո դրամաշնորհի պահանջներն ու պայմանները ներկայացնելու նպատակով Հետազոտության և զարգացման կենտրոնը մեկ ամսվա ընթացքում կազմակերպում է սեմինար:
- 2.6 Մրցութային ընտրության անցկացման համար ռեկտորի հրամանով ստեղծվում է ներհամալսարանական դրամաշնորհների մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ մրցութային հանձնաժողով), որի կազմը յուրաքանչյուր տարի հաստատվում է ԵՄՀ-ի գիտական խորհուրդը:
- 2.7 Մրցութային հանձնաժողովի կազմավորման և գործունեության իրականացման պատասխանատուն է Հետազոտության և զարգացման կենտրոնը:
- 2.8 Մրցութային հանձնաժողովը հայտերը ստանալուց հետո 15 օրվա ընթացքում
- ✓ հաստատում է մրցութին թույլատրված հայտերի ցանկը՝ վերը նշված պահանջներին համապատասխան,
 - ✓ հաստատում է փոձագիտական խորհրդատվական խմբի կազմը և փորձաքննության է ուղարկում ներկայացված հայտերի նախագծերը:
- 2.9 Հայտերի փորձաքննության համար սահմանվում է մեկ ամիս:
- 2.10 Մրցութային հանձնաժողովը փորձաքննության արդյունքները ստանալուց հետո 10 օրյա ժամկետում
- ✓ ուսումնասիրում և քննարկում է փորձագետների եզրակացությունները և երաշխավորությունները,
 - ✓ անհրաժեշտության դեպքում սահմանում է կրկնակի փորձաքննություն՝ սահմանելով լրացուցիչ ժամանակահատվածը,
 - ✓ գաղտնի քվեարկությամբ որոշում է կայացնում դրամաշնորհների տրամադրման վերաբերյալ:
- 2.11 Մրցութային հանձնաժողովի որոշման հիման վրա ԵՄՀ-ի ռեկտորի կողմից ընդունվում է հրաման հաղթողներին դրամաշնորհներ շնորհելու մասին:

3. Դրամաշնորհային մրցութին դիմելու կարգը

- 3.1 Դրամաշնորհների մրցութին կարող են ներկայացվել թիմային կամ անհատական հետազոտական հայտեր, որոնք պատրաստվել են ԵՄՀ-ի ակադեմիական աշխատակազմի, ինչպես նաև ուսանող-դասախոս համատեղ թիմերի կողմից:

- 3.2 Յուրաքանչյուր թիմային նախագծում կարող է լինել մեկ ղեկավար: Յուրաքանչյուր թիմ կամ անհատ կարող է ներկայացնել միայն մեկ նախագծի հայտ: Անձը, որը հանդես է գալիս որպես նախագծի հայտ ներկայացրած խմբի անդամ, չի կարող առանձին հայտ ներկայացնել տվյալ տարվա հայտարարված դրամաշնորհի շրջանակներում:
- 3.3 Ծրագրի/հետազոտության տևողությունը չպետք է գերազանցի մեկ տարին:
- 3.4 Մրցույթի հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով ըստ սահմանված ձևի (Հավելված 1): Հայտում ներկայացվում են հետազոտության հեղինակի (հետազոտական խմբի ղեկավարի) և ծրագրում ներգրավված այլ բոլոր անձանց անուններն ու կենսագրական տվյալները (CVs), ինչպես նաև առաջարկվող ծրագրի մանրամասն նկարագիրը:
- 3.5 Դրամաշնորհային ծրագրի իրականացման համար պահանջվող գումարի չափը որոշվում է ուսումնական տարվա առաջին գիտական խորհրդի նիստի ժամանակ և կարող է օգտագործվել առաջարկվող ծրագրի վարչական, ծրագրային և մարդկային ռեսուրսների ծախսերի համար:
- 3.6 Սույն կարգը չի վերաբերում այն հայտերին, որի աշխատանքների կատարումն արդեն ֆինանսավորվում է (լրիվ կամ մասնակի) այլ նախագծի շրջանակներում կամ այլ կազմակերպությունների կողմից:
- 3.7 Դրամական միջոցները տրամադրվում են յուրաքանչյուր ամիս որպես աշխատավարձի հավելավճար կամ կրթաթոշակ:
- 3.8 Դրամաշնորհատուն հաշվետվություն է ներկայացնում յուրաքանչյուր եռամսյակ Հետազոտության և զարգացման կենտրոն:
- 3.9 Հետազոտության և զարգացման կենտրոնը ապահովում է դրամաշնորհային ծրագրերի իրականացման հաշվետվողականությունը:
- 3.10 Դրամաշնորհների իրականացման մոնիտորինգն իրականացնում է՝ Հետազոտության և զարգացման կենտրոնը՝ ապահովելով դրամաշնորհատուների խորհրդատվությունը:
- 3.11 Դրամաշնորհի ստացած հայտատուներն առաջին դրամաշնորհի ծրագիրն ավարտելուց հետո կարող են նորից հայտ ներկայացնել դրամաշնորհի ստանալու համար, սակայն այդ հաջորդող ծրագիրը պետք է ակնհայտորեն տարբերվի ԵՄՀ-ի ֆինանսավորմամբ իրականացված առաջին ծրագրից: